թիւնի՝ որուն համար Ս. Ստեփանոսի մատրան մէջ գետեղուած են հետեւեալ երկու յիշատակարանները. Ա. «Սուրբ Ստեփաննոսի ոսկեզօծ խաչկալս յիշատակ է Կամարակապցի հանգուցեալ Մհտ. Յարութիւնի և կողակցոյն Մհտ. Խանըմին և ծնողացն Նազարին և Մհտ. Նազլուին և որդւոցն Մհտ. Մըկրտչին և Մինաս Զէլէպիին և ամ. զարմից նոցա։ Յէմ. ի Սբն. Յակոբ ի թվին ՌՃՂԱ. (= 1742). յիշեցէք ի Տէր Քս. ամէն.»

Բ. «Սրբոյն Գրիգորի Լուսաւորչի ոսկեզօծ խաչկալս յիշատակ է Կամարակապցի հանգուցեալ Մհտ. Յարութիւնի և կողակցոյն Մհտ. Խանըմին և ծնողացն Նազարին և Մհտ. Նազլուին և որդւոցն Մհտ. Մկրտչին և Մինաս Զէլէպիին և ամ. զարմից նոցա. յէմ. ի Ս. Յակոբ ի թվին ՌՃՂԱ. (= 1742). յիշեցէք ի Տէր Քս. ամէն»։ Մհտ. Յարութիւնի ուրիշ նուէրներու մասին (ՄՁ. Թ. 532)։

ՅԱՐՈՒԹԻՒՆ (Մհտ.) ՈՐԴԻ (Մհտ.) ՄՈՒՐԱՏԻ, ՎԱՆՑԻ.— ՄՁ. Թ. 1963 յիշատակարանէն կը քաղենք հետեւեալը իր մասին. «Յիշատակ է սուրբ Աւետարանս Վանեցի Մհտ. Մուրատի որդի Մհտ. Յարութիւնին. մօրն աղա Սօլթանին, հանգուցեալ եղբօրն Աղախանին և Մհի Յարութիւնի կողակից Դուրտանին և որդւոցն Յոհանէսին, Բարսեղին, դստերացն Հռիփսիմէին, այլև Մհի Յակոբին, Պօղոսին կողակցին Ղայիմին, Եղիսին... որ ստացաւ աստուածախօս բուրաստանս ի հալալ արդեանց իւրոց և ետ յիշատակ յաստուածակոխ քաղաքն Երսղմ. ի յաթոռն Սբց. Յակոբեանց (Խապ. Ցուց. տետր Է. էջ 536)։

ՅԱՐՈՒԹԻՒՆ (Մհտ.) ՋՈՒՂԱՅԵՑԻ.— 1764ին ընտանեօք ուխտաւորութեամբ կ'այցելէ Ս. Յակոբի վանքը և կը նուիրէ մագաղաթեայ և ականակուռ ծածկոյթով ձեռագիր Աւետարան մը՝ որ ունի հետեւեալ յիշատակարանը. «Յիշատակ է ոսկեպատ և ականակուռ Ս. Աւետարանս Ջուղայեցի Մհտ. Յարութիւն աղային և իւր կողակցոյն Թագուհի խաթունին և իւր որդի Ստեփան Աղային յերուսաղէմ, ի դուռն Ս. Յակոբայ, թուին ՌՄԺԳ (= 1764). (Ցուց. Պ.)։

ՅԱՐՈՒԹԻՒՆ ՄՐՄՐԵԱՆ, ՊՈԼՍԵՑԻ.— Ծ. 1860ին. աշկ. Սկիւտարի Ս. Խաչ Վարժ.ին, ուր օգտուած է հայերէնագէտ Խաչատուր Մխսաքեանէն։ Նախ կը հետեւի առևտրական աս-